Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

[illegible]

[illegible]

396(47)
И-28

329.15(47.925):396
Ս-28

Ս. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

7010

# ՊԱՏԺՈՂՈՎՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

396(47)
Ս-28

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱ[Ն]

396(47)
Ս-22

Ս. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

# ՊԱՏԺՈՂՈՎՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐՋԱՆՈՒՄ

1781

7010

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԵՐԵՎԱՆ — 1931 — ՊԵՏՀՐԱՏ

56.294

29 JUL 2013

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. 1726
ԳԼԱՎԼԻՏ 6369 (բ)
ՊԱՏՎԵՐ 3637
ՏԻՐԱԺ 5000

ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱՐ

5461-2010

# ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՇՈՒՐՋԸ

Խորհրդային Միության աշխատավոր մասսաները, կոմկուսի ղեկավարությամբ, հաջողությամբ կատարելով հնգամյակի անցած յերկու տարիների պլանը, թեվակոխել են յերրորդ վճռական տարին։

Վճռական տարում կուսակցական կազմակերպությունների առաջ խնդիր է դրված՝ ել ավելի լայն ծավալել սոցիալիստական հարձակումը բոլոր ֆրոնտների վրա, արագ անցնել յերկրի ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման տեմպը և այդպիսով ավարտել Խորհրդային Միության սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը։

Այս տարի Խորհրդային Միության ժողովրդական տնտեսությունը պետք է տա 49 միլիարդ ռուբլի յեկամուտ՝ ի դիմաց հնգամյակի վերջին տարում նախատեսված 49,7 միլիարդ ռուբլու։ Պետք է կառուցվեն 518 նոր գործարաններ և 1040 մեքենատրակտորային կայաններ։

Հիմնական հացահատիկային շրջանները (դաշտային Ուկրաինա, Հյուսիսային Կովկաս, Ստորին Վոլգա, Միջին Վոլգայի Զավոլժյան միջին թվով պետք է կոլլեկտիվացման յենթարկվեն 80 տոկոսով, վորը նշանակում է հիմնականում այդ վայրերում ավարտել համատարած

կոլեկտիվացումը և նրա հիման վրա լիկվիդացիայի յենթարկել կուլակին վորպես դասակարգի։

Հացահատիկային մնացած շրջաններում կոլեկտիվացման պետք ե յենթարկվեն գյուղացիական տնտեսությունների 50 տոկոսը, իսկ մյուս շրջաններում 20—25 տոկոս։

Այդպիսով այս տարի, հնգամյակի յերրորդ վճռական տարում, Խորհրդային Միության չքավոր միջակ տնտեսությունների կեսից ավելին պետք ե ընդգրկվեն կոլեկտիվ տնտեսություններում։

Խոշոր խնդիրներ են դրված նաև Հայաստանի կուսակցական կազմակերպությունների առաջ։ Ժողովրդական տնտեսության 31 թ. պլանի համաձայն, այս տարի Հայաստանի արդյունաբերությունը, պիտի տա 90 միլիոն ռ. արտադրանք՝ ի դիմաց անցյալ տարվա 42,8 միլիոն ռ. արտադրանքի, պետք ե ստացվի 75 միլիոն կիլովատ ժամ ելեկտրոեներգիա՝ ի դիմաց անցյալ տարվա 36,5 միլիոնի, 5,5 հազար տոն պղինձ՝ ի դիմաց 3400 տոնի, 20 միլիոն մետր տեքստիլ արտադրանք՝ ի դիմաց 10 միլիոն մետրի։

Պետք ե լայնացնել ցանքսի տարածությունները՝ հասցնելով այն 450,000 հեկտարի՝ ի դիմաց անցյալ տարվա 374.000 հեկտարի, վորից 40.000-ը հատկացվելու յե տեխնիկական կուլտուրաներին։ Նախատեսնված ե բամբակացան շրջաններում կոլեկտիվացման տոկոսը հասցնել 50—ի, իսկ մյուս շրջաններում 20—25 տոկոսի։

Անշուշտ սրանք խոշոր խնդիրներ են, վորոնց իրագործման համար անհրաժեշտ ե կազմակերպել աշխատավոր մասսաներին, դրանց թվում նաև աշխատավոր կանանց և գլխավորել նրանց ակտիվությունը։



Այժմ մեր առաջ կանգնած են հսկայական կարեվորություն ունեցող տնտեսական, քաղաքական կամպանիաներ, ասում ե ընկ. Քարթվելիշվիլին՝ կին—սեկտորների վարիչների Անդրկովկասյան խորհրդակցությունում, վորոնք կենսագործելու համար միասնական ճակատով պետք ե գնա և կինը և տղամարդը, բանվորն և բանվորուհին, գյուղացին և գեղջկուհին։ Յեթե կինը յետ ե մնում, նշանակում ե յետ ենք մնում նաև մենք, յետ ե մնում նաև պլանը, ուստի վերջինս չի կատարվում։

Այդպիսով, վորպեսզի կատարվի պլանը, անհրաժեշտ ե հաշվի առնել ու կազմակերպել կանանց աճող ակտիվությունը և ոգտագործել այն կուսակցության հիմնական գիծը կենսագործելու համար։

## ՊԱՏԺՈՂՈՎՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԿԱՆԱՆՑ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՐ

Բանվորուհիների, կոլտնտեսուհիների, չքավոր—միջակ գեղջկուհիների լայն խավերը սոցիալիստական շինարարության հիմնական խնդիրների շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու լավագույն ու փորձով ստուգված ձևը հանդիսանում են կանանց պատժողովները։ Տարեցտարի ավելանում ե պատժողովների և նրանց մեջ ընդգրկված պատգամավորուհիների թիվը։ Հայաստանում 28-29 թվին կար ընդամենը 345 պատժողով, 10156

պատգամավորուհիներով, 29—30 թվին արդեն կար 431 պատժողով 13631 պատգամավորուհիներով, իսկ 30—31 թվին ունենք 626 պատժողով 21989 պատգամավորուհիներով:

Անկասկած պատժողովներն իրենց գոյության ընթացքում տվել են դրական արդյունք: Բանվորուհիների և գեղջկուհիների ակտիվի խոշոր մասն անցել է պատժողովների բովով և ներկայումս լծված է սոցիալիստական շինարարության գործնական աշխատանքներին: Սակայն, յեթե մինչեվ հիմա պատժողովներն յեղել են պատգամավորուհիներից սոցիալիստական շինարարության համար կադրեր պատրաստելու դպրոց, ապա ներկայումս՝ հնգամյակի յերրորդ վճռական տարում:

«Պատժողովները թե քաղաքում և թե գյուղում պետք լինեն այնպիսի լծակ-հարվածային բրիգադա վորի ոգնությամբ և կուսակցության ղեկավարությամբ շարժման մեջ դրվեն բանվորուհիների, կոլտնտեսուհիների և աշխատավոր կանանց լայն մասսաները» (Համկոմկուսի վորոշումներից):

Սրա համար անհրաժեշտ է վերակառուցել, արմատական վերափոխման յենթարկել կանանց պատժողովների աշխատանքները և պատժողովները դարձնել՝ քաղաքում յերեսը դեպի արդյունաբերություն, իսկ գյուղում՝ դեպի կոլտնտշինարարություն:

Պատժողովներն, արտադրության ու կոլտնտշինարարության մոտեցնելու նպատակով, պետք է կազմակերպել ըստ արտադրական սկզբունքի: Բանվորուհիների պատժողովները պետք է կազմակերպել ըստ գործարանների, ըստ ցեխերի, հերթերի: Բանվորների կանանց պատժողովը, վորը խոշոր նշանակություն ունի բանվորի կնոջն արդֆինպլանների կատարման,



գործալքումների դեմ պայքարելու գործում ներգրավելու, բանմատակարարման կանոնավորման ու կոոպերացիայի աշխատանքների վերակառուցման մասնակից դարձնելու տեսակետից պետք է կազմակերպվի բանվորական վայրերում ըստ բնակչինկոոպերի: Գեղջկուհիների պատժողովները պետք է կազմակերպել խորհտնտներին ու կոլտնտներին կից:

Անշուշտ, պատժողովների այդպիսի կառուցվածքը կմոտեցնի պատժողովներն արտադրության և հնարավորություն կտա նրանց զբաղվելու կոնկրետ գործնական խնդիրներով:

Մինչեվ այս տարի պատժողովներին ուղարկվում եր աշխատանքի հատուկ ծրագիր: Ծրագիրը կազմված եր այնպես, վոր նրա մեջ կար թե տեսական և թե գործնական խնդիրներ: Այդ ծրագրերը ծանոթացնելով պատգամավորուհիներին մի վորևե տեսական խնդրի հետ, դա անմիջապես կապում եր գործնական, ծանոթ խնդրի հետ: Որինակ՝ «Ի՞նչ է կոոպերացիան» նյութն անցնելիս՝ լսվում եր տվյալ վայրի կոոպերատիվի նախագահի զեկուցումը: Սակայն այս ծրագիրն ուներ խոշոր բացեր: Մի կողմից, պատժողովների ղեկավարները, վորոնք վորակով թույլ եյին, չեյին կարողանում տեսական և գործնական խնդիրները այնպես շաղկապել, վոր սպասելի եֆեկտ ստացվեր, իսկ մյուս կողմից, պատժողովների միատեսակ ծրագիրն, անկասկած չեր կարող հաշվի առնել ամեն մի շրջանի տնտեսական պայմաններն ու նրանցից բղխող հրատապ խնդիրները: Այսպես որինակ, յեթե Ղուրդուղուլու շրջանի համար հիմնական խնդիրը բամբակագործությունն է, ապա մի ուրիշ շրջանի համար հանդիսանում է անասնապահությունը և այլն:

Մյուս կողմից այդ ծրագիրը հնարավորություն չէր տալիս պատժողովներին ժամանակին զբաղվելու կուսակցության առաջ դրված խնդիրներով: Այդ ժամանակ, յերբ ձեռնարկության առաջ խնդիր էր դրված մոբիլիզացիայի յենթարկել վողջ բանվորության ուժերը՝ արդֆինպլանների կատարումն ապահովելու համար, պատժողովի ղեկավարն առաջադրելով վերևից ստացված ծրագրով՝ անցնում էր «Խորհրդային իշխանության կառուցվածքը» կամ մի այլ նյութ և կամ, յերբ գյուղի վողջ կազմակերպությունները զբաղված էին բերքահավաքը կազմակերպելով, պատժողովի ղեկավարը զբաղեցնում էր պատգամավորուհիներին ազգային խնդրով և այլն:

Այսպիսով, պատժողովները կարծես թե վերածվել էին հին տիպի քաղդպրոցների և չէին կարողանում կանանց լայն մասսաները մոբիլիզացիայի յենթարկել կուսակցության հիմնական և մարտական խնդիրների շուրջը: Մի քանի պատժողովներ այնքան էին կտրված ձեռնարկություններից, վոր նույնիսկ ունեյին ՄՈՊՐ-ի, ՊԱԶ-ի և հատուկ բջիջներ, ինչպես օրինակ Յերևանի ծխախոտի գործարանի պատժողովն ուներ հատուկ ՄՈՊՐ-ի բջիջ:

Այս տարի վերացված է պատժողովների միատեսակ ծրագիր ուղարկելու սիստեմը: Պատժողովներն իրենք պետք է կազմեն իրենց աշխատանքների հատուկ բանվորական պլաններ, վորը պետք է բղխի տվյալ վայրի ձեռնարկության, կոլտնտեսության և խորհտնտեսության պայմաններից և համաձայնեցված լինի տեղի բջջի և այլ կազմակերպությունների աշխատանքների ծրագրերին:

Պատժողովներն արտադրական սկզբունքով կազմա-



կերպել և նրանց աշխատանքի ծրագիրը համաձայն տեղական պայմաններին կազմելու սկզբունքի կիրառումը հնարավորություն կտա պատժողովներին՝ վերակառուցելու աշխատանքները՝ վերածվելով հարվածային բրիգադների, կօժանդակի կանանց լայն խավերին համախմբելու կուսակցության հիմնական գծի շուրջը և պայքարելու նրա կենսագործման համար:

Պատժողովները, քննության յենթարկելով այս կամ այն կոնկրետ խնդիրը, պետք է ապահովեն իրենց վորոշումների կիրառումը: Սրա համար ամենաստուգված ու լավագույն ձևը հանդիսանում է բրիգադների կազմակերպումը: Արդեն մի շարք պատժողովներն անցել են բրիգադների կազմակերպման: Տեքստիլի տրիկոտաժ գործարանի պատժողովները կազմակերպել են արդֆինպլանների կատարման համար և բրակների ու գործալքումների դեմ պայքարող բրիգադներ, վորոնց միջոցով բանվորուհիների լայն խավերը մոբիլիզացիայի յեն յենթարկել կիրառելու պատժողովների վորոշումները պլանների կատարման մասին: Ներկայումս անհրաժեշտ է ծավալել այդ բրիգադների աշխատանքները և նորանոր բրիգադներ կազմակերպել, ինչպես օրինակ՝ աշխատանքի սոցիալիստական ձևերը ծավալող, բանմատակարարման, տեխնիկան ուսումնասիրող, բանվորների կենցաղը բարելավող և այլն:

Բանվորների կանանց պատժողովներն էլ անցել են բրիգադների կազմակերպման: Օրինակ, Յերևանի մի շարք պատժողովներ կազմակերպել են կոոպերատիվ բրիգադներ, վորոնց նախաձեռնությամբ շեֆություն են վերցրել բանկոոպի մերձքաղաքային տնտեսության վրա և հերթով գնում են այդ տնտեսության մեջ աշխատելու: Բանվորների կանանց պատժողովները, վորոնք

խոշոր աշխատանք կարող են կատարել արդյունաբերության համար նորանոր կադրեր տալու գործում, պետք է կազմակերպեն արտադրության հետ կապ ստեղծող, նախկին բանվորուհիներին հաշվի առնող, բանվորների կանանցից արտադրության համար կադրեր պատրաստող, կենցաղային հիմնարկները ծավալող և այլ բրիգադներ:

Խոշոր արդյունք է տվել կոլտնտեսությունների պատժողովներին կից կազմակերպված գարնանացանի մարտական խնդիրները կիրառող մի շարք բրիգադները (սերմ զտող, հող պարարտացնող, գյուղատնտեսական գործիքներն հաշվի առնող և այլն): Ներքին Խաթունարխի պատժողովին կից կազմակերպված կոլտնտշարժման ոժանդակող բրիգադայի շնորհիվ կոլտնտեսության մեջ են ընդգրկված 35 տնտեսություններ, Ծամշադինում՝ 56 և այլն:

Ներկայումս անհրաժեշտ է ծավալել բրիգադային ձևի աշխատանքները և կազմակերպելով նոր տիպի բրիգադներ կանանց բանվորական ուժը նպատակահարմար ոգտագործող, կանանց աշխատանքը կոլտնտեսություններում կազմակերպելով, քաղհանի, խոտհունձի և այլն բրիգադներ ապահովելով կոլտնտուհիների և չքավոր միջակ գեղջկուհիների լայն խավերի մասնակցությունը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանը:

Պետք է խուսափել չարլոն բրիգադներ կազմակերպելուց և այդպիսիները կազմակերպել ըստ պահանջի: Յեթե գյուղում սերմի զտումը կատարված է 100 տոկոսով, կարիք չկա կազմակերպել սերմ զտող բրիգադա, կամ յեթե ձեռնարկությունում բրակների տոկոսը շատ չնչին է, ապա նույնպես կարիք չկա կազմակեր-



պել բրակների դեմ պայքարող բրիգադա, հակառակ դեպքում այդ բրիգադներն անգործության կմատնվեն: Իսկ մի շարք բրիգադներ, ինչպես որինակ․ կենցաղային, կոոպերատիվ և այլն անշուշտ ավելի յերկարատև պետք է լինեն:

Բրիգադները պետք է ունենան իրենց ղեկավարները, վորոնք լինելով հարվածային և ստանալով պատժողովից և այլ կազմակերպությունից համապատասխան ցուցմունքներ՝ ի վիճակի կլինեն ծավալել բրիգադների աշխատանքները:

Բրիգադների ղեկավարներին ցուցմունքներ տալու նպատակով անհրաժեշտ է հրավիրել միատեսակ բրիգադների ղեկավարների պարբերական խորհրդակցություններ: Որինակ՝ ձեռնարկության կից պատժողովներն ունեն արդֆինպլանների կատարման բրիգադներ: Անհրաժեշտ է ամեն մի յեռամսյակի նախորյակին հրավիրել այդ բրիգադների ղեկավարների խորհրդակցություն, ուր քննության յենթարկել գործարանի տվյալ յեռամսյակի արդֆինպլանը, կազմել հանդիպական արդֆինպլան և տալ կոնկրետ ցուցմունքներ, թե ինչպես այդ պլանը հասցնել բանվորուհուն և ինչպես ապահովել պլանների կատարումն ու գերակատարումը: Նման խորհրդակցություններ պետք է հրավիրել նաև շրջաններում կամ յենթաշրջաններում: Որինակ՝ բամբակացան շրջաններում բամբակի քաղհանի և չանաքի նախորյակին անհրաժեշտ է հրավիրել քաղհանը, չանաքը կազմակերպող պատժողովներին կից կազմակերպված բրիգադների ղեկավարների շրջանային խորհրդակցություններ, վորտեղ քննության յենթարկել այդ խնդիրը, ցուցմունքներ տալ, թե ինչ ձևով ոգտագործել կոլտնտուհիների, չքավոր միջակ գեղջկուհիների

բանվորական ուժը՝ քաղհանի և ջրանքի աշխատանքները հաջող կատարելու համար: Պատժողովներում պետք է լսել բրիգադների ղեկավարների զեկուցումները և տալ նրանց հետագա աշխատանքների համար անհրաժեշտ ցուցմունքներ:

Բրիգադները պետք է կապվեն համապատասխան կազմակերպությունների հետ և օգնեն նրանց իրենց առաջ դրված խնդիրներն իրագործելու: Պրոֆմիությունները պետք է օգտագործեն արդֆինպլանների կատարման, աշխատանքի արտադրողականության բարձրացման, սոցմրցման և հարվածայնության ծավալման նպատակով բանվորուհիների պատժողովներին կից բրիգադները: Կոլտնտմիությունները պիտի օգտագործեն պատժողովներին կից կազմակերպված կոլտնտշարժման օժանդակող բրիգադները և այլն:

Այսպիսով բրիգադները հնարավորություն կտան պատգամավորուհիներին անմիջապես կապվելու գործնական աշխատանքների հետ և վոտքի հանելու աշխատող կանանց լայն խավերը, սոցիալիզմի կոնկրետ կառուցման ակտիվ մասնակից դարձնելու համար:

## ՈԳՏԱԳՈՐԾԵՆՔ ՊԱՏԺՈՂՈՎՆԵՐԸ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒՆ ՀԱԿԱՀԱՐՎԱԾ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Խորհրդային Միության արագ տեմպով աճելն ու զարգանալը դուր չի գալիս կապիտալիստական յերկրներին, վորոնք անտեսական սուր ճգնաժամ են ապրում:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին յեթե կապիտալիստական յերկրները հույս ունեյին, վոր Խորհրդային իշխանությունը յերկար ժամանակ դիմա-



նալ չի կարող, վոր ԽՍՀՄ-ը կվերածվի կապիտալիստական յերկրի: Ներկայումս տեսնելով, թե ինչպես Խորհրդային Միության աշխատավորությունը մեծ հաջողությամբ կատարում է 5-ամյակը 4 տարում, իսկ վորոշ ճյուղերում 3 նույնիսկ 2 և կես տարում, տեսնելով, թե ինչպես ԽՍՀՄ-ը ձեռք է բերում ամբողջ աշխարհի պրոլետարիատի և աշխատավոր մասսաների համակրությունը՝ այլևս չեն կարողանում հանդուրժել Խորհրդային Միության գոյությունը: Հակասությունները կապիտալիստական յերկրների և Խորհրդային Միության միջև քանի գնում սրվում է: Կապիտալիստական յերկրներն ամենաուժեղ կերպով պատրաստվում են գալիք պատերազմի համար: Խորհրդային Միության մասին, մի շարք պրովոկացիաներ տարածելով— հարկադիր աշխատանք, դեմպինգ և այլն օգտագործելով ու կազմակերպելով ակտիվ գվարդիականներին, դաշնակցական, մենշևիկյան և մուսավաթական հակահեղափոխական տարրերին, մեր յերկրում գլխավորապես հենվելով կուլակության վրա, պատրաստվում է ինտերվենցիայի: Դրա փայլուն օրինակը կարող է ծառայել «Արդյունաբերության կուսակցության» և մենշևիկ ինտերվենցիոնիստների դատավարությունը, արաբական «Ել ահրար» թերթի մերկացումները դաշնակցականների գործունեության մասին՝ Անդրկովկասի սահմանների մոտ և անցյալ տարվա բանդիտական-կուլակային դաշնակցական յելույթները մեր մի շարք շրջաններում: Խորհրդային Միության ներսում գտնված կապիտալիստական տարրերը, համաշխարհային բուրժուազիայի ծրագիրը ԽՍՀՄ-ն տապալման մասին իրագործելու համար աշխատում են իրենց ազդեցության տակ առնել աշխա-

տավոր մասսաների, դրանց թվում աշխատավոր կանանց հետամնաց խավերը: Ապացույց կարող է ծառայել 1930 թ. գարնանացանի կամպանիան, վորի ընթացքում կուլակը մի քանի շրջաններում օգտագործեց կանանց հետամնաց խավերին և դուրս բերեց կոլտնտշարժման Խորհրդային իշխանության միջոցառումների դեմ: Անշուշտ, յեթե դրա հիմնական պատճառներից մեկը դասակարգային պայքարի սրվածությունն էր, ապա մյուս կողմից դասակարգային թշնամին օգտագործեց մի շարք կուս. կազմակերպությունների կողմից կանանց մեջ կատարված աշխատանքների թույլ կողմերը և աշխատավոր կանանց վոչ բավարար դասակարգային դաստիարակություն տալու հանգամանքը:

Ընկ. Կագանովիչը 16-րդ համագումարում ասել է հետևյալը՝ «Գյուղում կանանց մեջ աշխատանք է կատարվել գլխավորապես կենցաղի գծով, իսկ կանանց դասակարգային դաստիարակությունը՝ գյուղում անբավարար են, գյուղում չի յեղել հստակություն չքավոր, միջակ կուլակ կնոջ տարբերելու մեջ: Սրա հետևանքով կուլակը շատ դեպքում օգտագործեց հետամնաց կանանց կոլտնտեսության դեմ»:

Պատժողովը վերածելով հարվածային բրիգադայի, պետք է վճռական հակահարված տալ դասակարգային թշնամուն, վորը հենարան է ուզում գտնել աշխատավոր կանանց հետամնաց խավերում:

Կազմակերպելով բանվորուհիների, կոլտնտեսուհիների, մենատնտեսուհի չքավոր-միջակ գեղջկուհիների լայն խավերը և տալով նրանց անհրաժեշտ դասակարգային դաստիարակություն, անհրաժեշտ է հասկացնել վոր՝



«Վճռական հաղթանակի հեռանկարը չի կարող բանվորների և գյուղացիների մեջ վոգևորության և աշխատանքային նոր վերելքի պոռթկում առաջ չբերել: Սակայն դա միաժամանակ չի կարող չուժեղացնել մեր դասակարգային թշնամիների ատելությունն ու վոխը: Ահա դրա համար են այնքան հուսահատ դիմադրում կապիտալիզմի մնացորդները, Խորհրդային Միության ներսում, (կուլակների դիմադրությունը, վնասարարություն և այլն): Ահա հենց դրա համար է միջազգային կապիտալիզմն արդեն տենդորեն պատրաստվում զինված ինտերվենցիայի ԽՍՀՄ-ի դեմ:

Դասակարգային սրված պայքարի այսպիսի պայմաններում բանվոր դասակարգի, կոլտնտեսականների, և ամբողջ աշխատավորության ստեղծագործական ուժերի առավելագույն մոբիլիզացիա է պահանջվում այդ դժվարությունները հաղթահարելու համար, վորոնք կանգնած են սոցիալիստական շինարարության ճանապարհի վրա, «Հնգամյակը չորս տարում» լոզունգն իրագործելու ճանապարհի վրա:

«Հենց այսպիսի պայմաններում մեզնից ուժերի առավելագույն լարումն է պահանջվում յերկրի ինդուստրացման և սոցիալիստական շինարարության հետագա ծավալման և յերկրի պաշտպանունակությունն ուժեղացնելու համար»: (Դեկտեմբերյան պլենումի վորոշումներից):

Շատ են խանգարում սոցիալիստական շինարարության գլխավոր գծից շեղվողները՝ աջ, «ձախ» օպորտյունիստները և նրանց նկատմամբ հաշտվողական վերաբերմունք ցույց տվողները, վորոնք փաստորեն հանդիսանում են կուլակի ագենտուրան մեր կուսակցության մեջ:

Անշուշտ այս խնդիրներով պիտի զբաղվեն պատժողովները, վորոնք պարզ պատկերացում ունենալով կուսակցական հիմնական գծից շեղվողների մասին, կըկարողանան ունել կուսակցության՝ վճռական հակահարված տալու կուլակի ջրաղացին ջուր լցնող ամեն տեսակի ոպորտունիստներին:

## ՊԱՏԺՈՂՈՎՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՈԳՆԵՆ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԿԱԴՐԵՐ ՍՈՑՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ժողովրդական տնտեսության զարգացման ներկա շրջանում չափազանց կարևոր նշանակություն է ստանում բանվորներից, **կոլտնտեսականներից**, միանձնատեր բատրակ-չքավոր-միջակ գյուղացիներից սոցշինարարության համար նորանոր կադրեր պատրաստելու խնդիրը:

Այս տարի, համաձայն Համկոմկուսի և ԿՎՀ-ի դեկտեմբերյան պլենումի վորոշման, ժողովրդական տնտեսության մեջ, պետք է ընդգրկել 2 միլիոն բանվորներ: **Արագ աճող արդյունաբերության** և գյուղատնտեսության համար հարկավոր են բազմաթիվ ինժեներներ, տեխնիկներ, գյուղատնտեսներ և այլն:

Խորհրդային, պրոֆմիությունների, կոոպերացիայի և այլ կազմակերպությունների աշխատանքներն վերակառուցելու և բարձր աստիճանի վրա դնելու համար, պետք է նորանոր լավագույն հարվածայիններ ներգրավել այդ աշխատանքներին:

Խոշոր նշանակություն ունի նաև կանանցից կադրեր պատրաստելու գործը: Կանանց պատժողովները պետք



է ոգնեն՝ սոցիալիստական շինարարության զանազան բնագավառների համար կանանցից նորանոր ուժեր պատրաստելու գործին, հանդիսանան նախնական դըլպբացներ, աշխատավոր կանանց զանազան աշխատանքների հետ ծանոթացնելու և գործնական աշխատանքներում ընդգրկելու **համար**:

Դրա համար պատժողովները պետք է պատգամավորուհիներին կցեն զանազան կազմակերպություններին (խորհրդի սեկցիաներին, կոոպերատիվին, գործարկոմին և այլն):

Այս սիստեմը, վոր մինչև հիմա յել կիրառվել է, տվել է իր արդյունքները: Խորհուրդներում, կոոպերատիվներում և այլ ապարատներում աշխատող կանանց խոշոր մասն **անցել է պատժողովների բովով** և այնտեղ ստացել է նախնական պատկերացում այս կամ այն **կազմակերպության աշխատանքների մասին**:

**Այս սիստեմից ավելի շատ արդյունք** ստանալու նպատակով, անհրաժեշտ է, վորպեսզի կազմակերպությունները **ապահովեն կցվածների վրա** համապատասխան **ղեկավարություն և օժանդակություն**:

Պատժողովները պատգամավորուհիներին տալով նախնական **պատրաստականություն**, պետք է հոգ տանեն նրանց հետագա վորակավորման և մասնագիտացման մասին:

Թիֆլիսում կին-ակտիվի ընդհանուր ժողովում ընկ. Արությունյան տվել է հետևյալը՝

«Յեթե մենք ձեռնարկություններում, տրեստներում, խորհուրդներում, կոոպերացիայում, գործարաններում վարչություններում ունենանք կազմակերպիչներ և արտադրության ղեկավարներ



1781
5461-2010
ՀՍՍՀ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Публ. Библиотека ՀՍՍՀ — ССРА им. А. Мясникяна

բանվորուհիներից, ապա վնասարարությունը կլինի պակաս չափով, վորովհետև ամեն մեկը կիմանա իր գործն ըստ էության, ամեն մեկը նախքան մասնագետի խոսքին հավատալը՝ կջանա իմանալ և ստուգել գործը»:

Այդպիսով վնասարարության դեմ պայքարելու համար, անհրաժեշտ է հոգ տանել աշխատավոր մասսաների, դրանց թվում աշխատավոր կանանց, հետագա մասնագիտացման վրա: Հենց այս գործում խոշոր անելիք ունի կանանց պատժողովը, վորը պետք է զանազան կազմակերպություններին կցված կանանցից նորանոր ուժեր ուղարկի զանազան դասընթացքներում անհրաժեշտ վորակավորում ստանալու համար: Օրինակ, յեթե պատգամավորուհին կցված է յեղել խորհուրդի սեկցիաներին, ապա նրան կարելի յե ուղարկել խորհրդային գծով կազմակերպվելիք դասընթացքը, յեթե կցված է յեղել արտադրության, ապա արտադրության գծով բացվելիք դասընթացքը, իսկ յեթե կոլտնտեսության, ապա կոլտնտեսների գծով բացվելիք դասընթացքը և այլն:

Հետագայում պետք է ուղարկել ավելի բարձր տիպի ուսումնական հաստատություններ՝ Բանֆակ, բուհ, Բտուհ և այլն:

Միայն այդպիսով հնարավոր կլինի բանվորուհիներից, կոլտնտեսուհիներից, բատրակ-չքավոր, միջակ գեղջկուհիներից սոցշինարարության համար զանազան ֆրոնտների համար կադրեր պատրաստել և իրագործել ընկ. Քարթվելաշվիլու այն խոսքը վոր՝

«Գեղջկուհու համար հոգալը բնավ չի կայանում նրա սպառողական կարիքներին բավարարելու մեջ, այլ զարգացնել գյուղի կանանց ակտիվ, և



չքավոր-միջակ գեղջկուհիներից կադրեր պատրաստելու Անդրկովկասյան ֆեդերացիայի սոցիալիստական տնտեսության համար»:

## ՊԱՏԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԵՐԱՑՆԵՆՔ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԾԱՎԱԼԵՆՔ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ

Բանվորուհիների, կոլտնտեսուհիների, չքավոր-միջակ գեղջկուհիների լայն խավերը յերկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մասնակից դարձնելու գործին, խոշոր չափով արգելք է հանդիսանում, մի կողմից նրանց անգրագիտությունը, կիսագրագիտությունը, իսկ մյուս կողմից նրանց յերկրորդական, տնային աշխատանքներով ծանրաբեռնված լինելը:

Մեզ մոտ, Հայաստանում, անգրագետ ազգաբնակչության խոշոր տոկոսը կազմում են կանայք: Մեծ է նաև անգրագետների և կիսագրագետների թիվը պատժողովներում: Պատժողովներում ընդգրկված 21,[illegible] պատգամավորուհիներից 11.059 անգրագետներ են, վորը կազմում է պատգամավորուհիների 54 տոկոսը, իսկ 6963 հոգի կիսագրագետներ են, վորը կազմում է 31 տոկոսը: Այդպիսով պատգամավորուհիների 85 տոկոսը կազմում են անգրագետները և կիսագրագետները:

Պատժողովները պետք է ձգտեն ամենակարճ ժամանակամիջոցում վերացնելու պատգամավորուհիների անգրագիտությունը և կիսագրագիտությունը: Հակառակ դեպքում դժվար կլինի այդքան մեծ թվով անգրագետ և կիսագրագետ պատգամավորուհիներ ունեցող

պատմողներն օգտագործել կուսակցության հիմնական գիծը կենսագործելու և դասակարգային թշնամուն հակահարված տալու համար։

Ամենակարևորն այն է, վորպեսզի ամեն մի պատգամավորուհի, ամեն մի անգրագետ բանվորուհի, կոլտնտեսուհի, չքավոր-միջակ գեղջկուհի հասկանա վոր՝

«Ներկայումս գրագիտությունը հարկավոր է վոչ թե նրա համար, վոր պարծենան նրանով, ներկայումս գրագիտությունը հարկավոր է քաղաքական աշխատանքի համար, նրա համար, վորպեսզի լինեն մասսայի մեջ հեղինակավոր, վորպեսզի կարողանան ճիշտ կիրառել կյանքում կուսակցության քաղաքականությունը»։ (Արտյուխինա)։

Պատմողները պետք է հանդիսանան լիկկայանների կազմակերպման և նրանց մեջ անգրագետ աշխատավոր կանանց լայն խավերի ընդգրկման նախաձեռնողներ։

Չնայած անգրագիտության վերացման խոշոր քաղաքական նշանակությանը, այնուամենայնիվ, մեզ մոտ գործը ընթանում է դանդաղ և հետ է մնում սոցիալիստական շինարարության արագ թափից։ Թույլ է ընթանում նամանավանդ կանանց անգրագիտության վերացման գործը, վորի գլխավոր պատճառը կայանում է նրանում, վոր տեղերում շատ հաճախ լիկկայանների պարապմունքների ժամերը չեն հարմարեցնում աշխատավոր կանանց ազատ ժամերին և քիչ են մտածում լիկկայանների պարապմունքների ժամանակ յերեխային խնամելու հոգսից նրանց ազատելու մասին։

Մի շարք ձեռնարկություններում ու գյուղերում արդեն սկսել են կազմակերպել լիկկայաններին կից հատուկ մանկական օջախներ։



Պատմողներն այդ գործն էլ պետք է վերցնեն իրենց ձեռքը, կատարեն լիկկայաններին կից մանկական օջախների կազմակերպման փորձի փոխանակում, վորն անշուշտ կոժանդակի անգրագետ կանանց լայն խավերին լիկկայաններում ընդգրկելու գործին։

Աշխատավոր կանանց սոցիալիստական շինարարության զանազան ֆրոնտներում ներգրավելու գործին քիչ չեն խանգարում կենցաղային հիմնարկների բացակայությունը։ Վերջերս կոլտնտեսություններում կանանց աշխատանքի օգտագործման ուսումնասիրությունը պարզեց, վոր շատ տեղերում շնորհիվ կենցաղային հիմնարկների, գլխավորապես՝ մսուրների, մանկական հրապարակների և ճաշարանների բացակայության, աշխատանքի ընդունակ կանանց բանվորական ուժը լրիվին չի օգտագործվում։ Գյուղերում մսուր չունենալու պատճառով 85 աշխատունակ կանանցից կոլտնտեսության աշխատանքներին մասնակցել են միայն 5 կին, Քանաքեռում 72-ից 30 կին. գրում է ուսումնասիրություն կատարող բրիգադան։

Այդպիսով ներկայումս, կենցաղային հիմնարկների ծավալման խնդիրը վոչ թե յերկրորդական, այլ խոշոր քաղաքական նշանակություն ունեցող խնդիր է և շատ կապված է սոցիալիստական շինարարության աշխատանքներում հազարավոր ու միլիոնավոր կանանց ներգրավման խնդրի հետ։

Պատմողները պետք է հանդիսանան կենցաղային հիմնարկների ծավալման գործի նախաձեռնողները և պետք է մոբիլիզացիայի յենթարկել աշխատավոր կանանց լայն խավերին ու շահագրգռված կազմակերպությունների ինքնագործունեությունը։

## ՊԱՏԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՎԱԼԵՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ.—

Խորհրդային Միության բուռն աճումն ապացուցում է վոր շնորհիվ կուսակցության ճիշտ քաղաքականության, բանվոր դասակարգն աշխատավոր մասսաների հետ միասին, մեծ վոգևորությամբ լծված է սոցիալիզմի կառուցման աշխատանքներին և անցել է աշխատանքի բարձր ձևերի՝ սոցմրցման, հարվածայնության, արտադրական կոմունաների կազմակերպման։

«Կազմակերպելով բանվորների կամքը և ստեղծարար նախաձեռնությունը սոցիալիստական շինարարության ասպարեզում, սոցիալիստական մրցությունը կարճ ժամանակամիջոցում ամրացավ վորպես ԽՍՀՄ-ն բանվոր դասակարգի մասսայական շարժում՝ մեծ աշխատանքների պլան իրագործելու համար» (Հարվածային բրիգադների առաջին համամիութենական համագումարի բանաձևից)։

Խոշոր մասնակցություն ունեն նաև աշխատանքի սոցիալիստական ձևերի ծավալման գործում բանվորուհիները։ 16-րդ համագումարում ընկ. Կագանովիչն ասել է՝

«Առանձնապես ուրախալի յե այն փաստը, վոր սոցմրցումը և հարվածայնությունը ընդգրկում են բանվորուհիների լայն խավերը։ Մի շարք ձեռնարկություններում, վորտեղ առավելապես կիրառվում է կանանց աշխատանքը, պատգամավորուհիները և պատժողովները դառնում են սոցմրցման և հարվածային բրիգադաների կազմակերպման կազմակերպչական կենտրոնները»։

Նույնպես մեր մոտ, Հայաստանում, խոշոր մասնակցություն ունեն բանվորուհիներն աշխատանքի սո-



ցիալիստական ձևերի կազմակերպման ասպարեզում։ Առ 1-ն մայիսի 1931 թ. հետազոտված 51 ձեռնարկություններում 3822 բանվորուհիներից սոցմրցման մեջ են ընդգրկված 3461 հոգի։ Մի շարք ձեռնարկություններում պատժողովների ինքնագործունեությամբ կազմակերպվել են հատուկ արտադրական կոմունաներ։

Սակայն այս նվաճումները դեռ բավարար չեն հնգամյակի յերրորդ վճռական տարվա խնդիրները լրիվ իրագործելու համար։

Կազմակերպելով նորանոր հարվածային բրիգադներ, արտադրական կոլեկտիվներ, կոմունաներ, առանձին բրիգադների փորձը և նվաճումները փոխադրելով մի ձեռնարկությունից դեպի մյուսը, աշխատանքի արդյունքների սիստեմատիկ հաշվառումով և այլն, պատժողովները պետք է ողնեն կուսակցության և պրոֆ կազմակերպություններին ծավալելու աշխատանքի սոցիալիստական ձևերը և ապահովելու 5-ամյակը 4 տարում իրագործելու խնդիրը։

## ՊԱՏԺՈՂՈՎՆԵՐԸ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԵՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՌԵԶԵՐՎԸ

Խոշոր աշխատանք են կատարել և ունեն կատարելու պատժողովները հարվածային բանվորուհիներին, կոլտնտեսուհիներին պատրաստելու և կուսակցության մեջ ներգրավելու գործում։

Կուսակցության մեջ ընդգրկված կանանց խոշոր մասն անցել է պատժողովների բովով, այնտեղ է առաջին անգամ ծանոթացել կուսակցության խնդիրների հետ և այնտեղ է սովորել պայքարել կուսակցության հիմնական գծի կենսագործման համար։

Սակայն, չնայած նրան, այնուամենայնիվ կուսակցության մեջ կանանց ներգրավումը դանդաղ է ընթանում:

Մեզ մոտ, Հայաստանում, առ 1-ն ապրիլի 1931 թ. կուսակցության մեջ կան ընդամենը 1591 կին, որը կազմում է 7,7 տոկ., անբավարար է ընթանում նաև բանվորուհիներին կուսակցության մեջ ներգրավելու գործը: Տեքստիլ գործարանում, որտեղ մոտ 55–60 % բանվորուհիներ են, այնտեղ էլ կուսակցության մեջ կանանց տոկոսը ցածր է: Դեռ կան շրջանային կուս. կազմակերպություններ, որտեղ մեկ կամ յերկու կին կա, մինչդեռ այդ շրջաններում կան տասնյակ բատրակուհիներ, հարվածային կոլտնտեսուհիներ, որոնք գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում առաջին շարքերումն են յեղել և որոնց հեշտությամբ կարելի յե ընդունել կուսակցության մեջ:

Պատժողովները իրենց աշխատանքները պետք է այնպես վերակառուցեն, որ պատգամավորուհիները մասնակցեն բջջի բոլոր նիստերին, կուսակցության կողմից կազմակերպվելիք քաղ. դպրոցներին, կուս. դպրոցներին ու լավագույն հարվածային բանվորուհիներին, կոլտնտեսուհիներին քաշեն կուսակցության շարքերը:

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄՈՎ ԱՊԱՀՈՎԵՆՔ ՊԱՏԺՈՂՈՎՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Պատժողովների աշխատանքների արմատական վերակառուցումը խոշոր չափով կախված է նրանից, թե ինչպես տեղերում կուս. կազմակերպությունները կվերակառուցեն իրենց աշխատանքները և յերեսները կըդարձնեն դեպի կանանց մեջ տարվելիք աշխատանքները:



Կուսկազմակերպությունները՝ բջիջները, շրջկոմները կանանց մեջ տարվելիք աշխատանքները պետք է համարեն կուսակցական աշխատանքների անբաժան մասը:

Կանանց մեջ տարվելիք աշխատանքների թերագնահատման ամեն մի փորձը վորակելով վորպես աջ ոպորտյունիզմ գործնականում, կուս բջիջներն անխնա պայքար պետք է մղեն նման արտահայտությունների ու տրամադրությունների դեմ՝ բարձր աստիճանի վրա դնելով կանանց մեջ տարվելիք աշխատանքներն՝ օգտագործեն **պատժողովները կուսակցության** հիմնական գիծը կենսագործելու համար:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Կազմակերպել աշխատավոր կանանց կուսակցության գլխավոր գծի կենսագործման շուրջը . . . 3
2. Պատժողովները պետք է կազմակերպեն աշխատավոր կանանց պլանների կատարման պայքարի համար . . . . . . . . . 5
3. Օգտագործենք պատժողովները դասակարգային թշնամուն հակահարված տալու համար . 12
4. Պատժողովները պետք է ոգնեն պատրաստելու կադրեր սոց. շինարարության համար . . 16
5. Պատժողովների միջոցով վերացնենք անգրագիտությունը և ծավալենք կենցաղային հիմնարկները . . . . . . . . . 19
6. Պատժողովների միջոցով ծավալենք աշխատանքի սոցիալիստական ձևերը . . . . 22
7. Պատժողովները հանդիսանում են կուսակցության ռեզերվը . . . . . . . . . 23
8. Կուսակցության ղեկավարության ուժեղացումով ապահովենք պատժողովների վերակառուցումը . . . . . . . . . . 24



ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — ССРА
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0238403

424

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.

С. САРУХАНЯН

# ДЕЛЕГ. СОБРАНИЯ В ПЕРИОДЕ ПЕРЕСТРОЙКИ

Госиздат ССР Армении
Эривань—1931

56.294